հոգուն մատաղ, աղա, մենք լսել ենք, որ քո մէկ խօսքը պարոն բժշկի մօտ երկու չի լինի...

Կամենում էր ասել, որ ես այն աստիճան մտերիմ եմ պարոն բժշկապետին, որ նա իմ մի անգամ ասածը կամ խնդրածը երբեք կրկնել չի տայ: Բայց ինչո՞վ ես կարող էի օգտաւէտ լինել մահտեսուն, այդ էր գլխաւոր խնդիրը: Նա հասկացրեց ինձ, ասելով.

— Լսել ենք, պարոն բժշկապետը անթիքայ բաներ է հաւաքում. մենք բերել ենք պարոն բժշկապետի համար այնպիսի՛ անթիքաներ, որ ողջ աշխարհում չի գտնոի, երբ որ կգնէ, մենք քո լաւութիւնն էլ չենք մոռանա... քեզ համար էլ մի բան դուրս կգա...

— Ի հարկէ, դուրս կը գայ, — կրկնեցին միւս երկուսը համարեա թէ միաձայն:

— Ի՞նչ պէտք է դուրս գայ, — հարցրի ես փոքր-ինչ վրդովուած կերպով:

— Չես իմանում... — ասաց մահտեսին, ձեռքով կամաց իմ մէջքին բախելով, որ նրա փաղաքշանքի նշանն էր: — Ի՞նչ պէտք է դուրս գայ, օրհնած, ահա դրանից...

Նա գլուխը խորհրդաւոր կերպով շարժեց, մի խորամանկ ժպիտ երեւաց բոլորովին սափրած երեսի վրայ, ձախ աչքի կոպերը տըմփտըմփացրեց, ինձ աչքով արեց եւ, աջ ձեռքը մեկնելով, մի քանի անգամ ցուցամատի եւ բթամատի պտղուցները քսքսեց միմեանց հետ:

Անպիտանը աշխատում էր կաշառել ինձ, փող էր խոստանում: Նա ինձ ծառայի տեղ էր ընդունում եւ, սովորած լինելով ծառաների ձեռքով շատ բաներ շինել, կարծում էր, թէ ես էլ կարող եմ նրան օգտաւէտ լինել: Եթէ ես փոքր-ինչ հաճութիւն ցոյց տայի, ի հարկէ, նրանք կը տային ինձ մի ամբողջ ծրագիր, թէ ինչ պիտի անէի, կամ ի՞նչ պիտի խոսէի պարոն բժշկապետի մօտ: Երբ անփորձ եւրոպացին յայտնւում է արեւելքում եւ իր մօտ ունենում է տեղացիներից մի թարգման կամ ծառայ, վաճառականները շատ լաւ գիտեն, թէ ինչպէս պէտք էր այդ ծառայի միջնորդութեամբ կողոպտել եւրոպացուն:

Նրանց անպիտանութիւնը ինձ այն աստիճան զայրացրեց, որ կամենում էի բոլորոին էլ հեռացնել, պատասխանելով, որ պարոն բժշկապետը «անթիքաներէ չէ գնում, բայց զգուշացայ, չիցէ թէ իմ վարմունքը Ասլանին անհաճոյ լինէր: Երեքին էլ ներս տարայ:

Մտնելով Ասլանի սենեակը, երեքն էլ լռութեամբ գլուխ տոեցին եւ ոտքի վրայ կարգով շարոեցան դռան մօտ: Ասլանը այդ միջոցին, բոլորովին